

ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ա. ՅԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Ախուրյանի ձախ ափին, շոտոմոսի հռչակագրի հուշարձաններից մոտ 2—3 կմ հյուսիս, Հայկաձոր գյուղի արևմտյան կողմում գտնվում է ս. Գրիգոր անունը կրող մի եկեղեցի Գրականության մեջ, ինչպես և տեղացիների մոտ, այն հայտնի է նաև Կարմիր վանք անունով (կառուցված է կարմիր քարից)։

Հատակագծում եկեղեցին ունի ուղղանկյուն կառուցվածք։ Բեմի երկու կողմերում տեղադրված են նեղ և երկարավուն ավանդատները։ Կլանաձև բարձրադիր գմբեթը հենվում է սյուններից խոյացող կամարների վրա։ Արտաքին պատերին կան որմնախորշեր։

Արձանադրության ստորին աջ անկյունում տեղադրվել է առյուծի ոչ մեծ մի քանդակ, Եկեղեցին ունի մի մուտք։ Այն գտնվում է հարավային կողմում։ Արևմտյան պատի վերին մասում, մոտ 6 մետր բարձրության վրա, գտնվում է պատուհանը՝ բաժանված զեկորատիվ սյունով։ Մեկական պատուհաններ կան հարավային պատին՝ մուտքի վերևը, և արևելյան պատին՝ բեմի կողմից։ Պատուհանները արտարուստ զարդարված են կամարաձև զարդաքանդակներով։ Հարավային և արևելյան պատերին կան որմնախորշեր։ Զարդաքանդակներով են պատված նաև քիվերը։

Եկեղեցին ունի նորոգման շատ հետքեր հատկապես հարավային կողմից։ Նորոգված հատվածներում երեսապատման քարերը տարբերվում են հենրից իրենց փոքրությամբ, նորոգման հետևանքով մի փոքր տեղափոխվել է եկեղեցու մուտքը։ Մուտքի կամարը նույնպես զարդաքանդակված է, առանձնապես աչքի է ընկնում ոլորաձև զարդազծերով կամարաքարը։

Եկեղեցու ներսում կան քանդակազարդ քարեր և առանձին բեկորներ։

Բացի շինության արձանագրությունից եկեղեցու հարավային պատին և արևմտյան կողմում, քիվի վրա կան արձանադրություններ։ Դրանցից առաջինը, ինչպես և երևում է բովանդակությունից և տառաձևերից, դժվար թե XVII դարից ափսիս վաղ լինի, իսկ երկրորդը, անհամեմատ ավելի հին լինելով հանդերձ, ընդամենը մի փոքր բեկոր է, այն էլ նորոգման ժամանակ տաշված և հարմարեցված քիվին։

Եկեղեցու հյուսիսային կողմում հարավայինի օրինակով կա մի քանդակված շրջանակ, սակայն առանց արձանադրության։

Եկեղեցին մի փոքր վնասված է։ Հարավային կողմից մեծ մեղքվածք է տվել գմբեթը։

Հայկաձորի այս հույակապ հուշարձանը բազառտունյաց շրջանի լավագույն շինություններից մեկն է։

Եկեղեցու իսկական անունը իմացվում է շինության արձանագրությունից, որը փորագրված է հարավային պատի վերին մասում։


Առաջին աճյալ այս արձանադրությունը հրատարակել է Ս. Ջալալյանը¹։ Սակայն նրա վերծանությունն զգալիորեն շեղվում է բնագրից։ Ոգտագործելով Ս. Ջալալյանի հրատարակությունն ու Կեստների ընդօրինակությունները; այս արձանագրությունը հրատարակել է նաև Ալիշանը²։ Համեմատելով Կեստների ու Ջալալյանի բնօրինակ տվյալները, Ալիշանը գրում է. «Այնքան այլալայնություն է երկուսին ընթերցանածս՝ զի մարթ է համարել էլ կիցս արձանադրեալ յայն և այլ կողմանս տաճարինս»։ Հիշյալ նյութերի անբավարարության հետևանքով արձանագրությունը վերջնական հավաստիությամբ վերականգնել և վերծանել Ալիշանին չի հաջողվել։

Վերծանման գործում ամենամեծ խոչընդոտներից մեկը արձանագրության պակասավորությունն է։ Եկեղեցին նույն անթաշկվել է նորոգման, առանձին տեղերում փոխվել են նրա երեսապատման քարերը, և արձանագրությունից անհետացել են որոշ հատվածներ։ Առաջին տողը պարունակող քարերից պակասում են երկուսը, ուր կարող էր տեղափոխվել միջին հաշվով քսան

¹ Ս. Ջալալյան, Ժանապարհորդություն ի մեծն Հայս, հատ. Ա, Թփղիս, 1848, էջ 222—223։

² Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 169։

տատ (հաշվի առնելով միանգամայն համաչափ դրված տասերի մեծությունը), Վնասվել են նաև 5—9-րդ տողերի վերջավորությունները, որոնք տեղագրված են եղել մեկ քարի վրա: Այժմ այդ քարերի փոխարեն այնտեղ անարձանագիր սրբատաշ սալեր են ագուցված: Համեմատաբար ավելի է տուժել իններորդ տողը, որի նախավերջին քարը ևս կտրված և նորոգված է: 6—8-րդ տողերից միջին հաշվով պակաս է տասր տառ, իսկ 9-րդ տողից՝ զրեկի կրկնակին: Բայց ինչպիսի հատվածներից, արձանագրությունն ունի նաև մի շարք մանր եղծումներ ասանձին տեղերում, որոնցից յուրաքանչյուրը բնորոշում է մեկ կամ երկու տառ: 6—9-րդ տողերի միջին մասում գոյություն ունի վիճագրված կլոր շրջանակ: Շրջանակի հատվածում արձանագրությունը ունի եղծումներ և սվադի տակ անցած ասանձին տառեր: Լիակատար պատկերացում կազմելու համար բերում ենք դժադրական պատճեններ բոլոր յուրաքանչյուր քարի:



Արձանագրության առաջին տողի վերաբերյալ Ջալալյանի մոտ ոչ մի նշում չկա նրա առևտսավորության մասին: Այդ պատճառով Ալիշանը ևս, հավանաբար շրջողնելով Ջալալյանի վերականգնած ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ բառը և շիմանալով բացակայող հատվածի ծավալի մասին, փորձել է ԱԾԱՊ պահպանված բառակիրքը վերականգնել միայն ԱՍՏՈՒԾՈՅ բառով և քանի որ այն ավելի է համապատասխանում շարադրանքին, Ալիշանը ենթադրել է, որ այդ բառը կլրացնի պակասը:

Երրորդ տողում Ալիշանը բաց է թողել ՎԵՄՍ բառը, իսկ Ջալալյանը Գրիգորի անվանն ավելացրել է ԼՈՒՍԱԻՈՐՉԻՆ, որը բնագրում չկա: Ալիշանն անտեսել է նաև ԳՐԻԳՈՐ անունը: Նույն տողի վերջում Ջալալյանը բաց է թողել ՀԱՅՐ բառը: Տեսագաշտից վրիպել է նաև Սողոմոն անվանը հաջորդող ՀԱՅՐ բառը 5-րդ տողից, իսկ Ալիշանը բաց է թողել շափաղանց կարևոր 4-րդ տողը ամբողջությամբ: 6-րդ տողի շարադրանքը նա բոլորովին փոխել է: 6—7-րդ տողերից Ջալալյանը բաց է թողել մեծ հատվածներ՝ 6-րդից բացակայում է տողի երկրորդ կեսը, սկսած ՅՄՁՁ թվականից, իսկ 7-րդից՝ տողի առաջին կեսը մինչև ՀԱՅՐ բառը ներառյալ: Այնուհետև ՆԼԳ թվականից առաջ գրել է ԵԻ Ի ԻՈՒՈՁՍ ՀԱՅՈՅ բառերը, որ չկան բնագրում: Ալիշանի մոտ բացակայում են 7-րդ, 8-րդ և 9-րդ տողերի երկրորդ կեսերը, իսկ սրպես 7-րդ տողի շարունակություն ենթադրել է՝ ՓԱԻՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ՝ այն, ինչ պետք է նախորդ տողի վերջավորությունը լինելու: 6—9-րդ տողերի պակասավոր վերջավորությունները Ալիշանը չի փորձել վերականգնել:

Միանգամայն համոզիչ է 7-րդ տողի վերջում Ջալալյանի վերականգնած ԽՈՍՏՈՎԱՆԱԻՂՔ բառը: 8-րդ տողից սկսած Ջալալյանի վերծանությունը նկատելիորեն շեղվում է բնագրից: ԳՐՈՒՆՍ ՍՈՐԱ Ջալալյանը փոխարինել է ԳՐՈՒՆՍ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, բաց է թողնված Ի ՔՍ-ը ՋԻՍ-ից առաջ, իսկ տողի վերջավորությունը ներկայացրել է ԵԻ ԾՆԱԻՂ ԻՄ ՁՀԱՅՐ ՍԱՐԿԻՍ ձևով, որը իր շարադրանքով տարբերվում է բնագրից: 9-րդ տողից բացակայում է տողի ամբողջ երկրորդ կեսը, 10-րդ տողի վերջում չի նկատել ՋԻՍ բառը և, վերջապես, ամենակարևորը՝ ոչ մի հիշատակություն չկա կլոր շրջանակի արձանագրված լինելու մասին:

Կանգ չառնելով մի շարք այլ մանր աղավաղումների և անճշտությունների վրա, պետք է ստել, որ այս ս.մ.ն.ի հետևանքով արձանագրությունը ժամանակին ճիշտ պատկերացում և տե-

զեկություն չի տվել նյութի՝ անձանց, թվագրության ձևերի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ, որոնք ներկայումս կարող են հետաքրքրություն ստաջացնել:

Չեզրի սոսկ ունենալով արձանագրության լուսանկարը և հենվելով տեղում կատարած ուսումնասիրության վրա, համապատասխան սեղերում արձանագրության պակասավոր հատվածները հնարավոր ենք գտնում լրացնել հետևյալ ձևով՝ առաջին տողից բացակայում է, ինչպես տասնյինը, մաս բասն տաս, որոնք պետք է տեղադրված լինեին գծերով ցույց տված Ա և Բ բարերի վրա (տես զծագրական պատճենը): 1-ին բարի վերջում պահպանվել է ԱԾԱՊԱ... բառակիրը, բրի շարունակությունը ենթադրվում է Ա բարի վրա: Այս 2-րդ բարի սկզբում նշմարվող Ա տառի առկայությունը (որը կարող է առնչվել միայն նախորդ բառի հետ), ինչպես նաև 1-ին և երկրորդ բարերի միջև եղած ընդարձակ տարածությունը վկայում են այն մասին, որ այստեղ հիշատակված է եղել ևս մի անձնավորության անուն, ում կյանքի ժամանակաշրջանով, Սմբատ Բ թագավորի հետ մեկտեղ, որոշվում է եկեղեցու շինության ժամանակը: Այդպիսի անձնավորություն, որի անունը գրվեր թագավորի անունից առաջ, կարող էր լինել միայն հոգևոր դասի բարձր պաշտոնյան: Տվյալ դեպքում հավանական է թվում ետալիկ Ա կաթողիկոսի անունը, որը հովվել է հայոց եկեղեցին 973—992 թթ.: Ելնելով այս ժամանակաշրջանի արձանագրություններում արդեն բանաձև դարձած շարագրության ձևերից, ի նկատի առնելով տեղադրվող տառերի բանակը, Ա և Բ բացակայող բարերի հատվածը վերականգնում ենք ԱԾԱՊԱՏԻԻ ԵԻ ՀՈԳԵՒՈՐ ՏՆ ԽԱԶԿԱՆ ԺԱՆՈՎԻ ՆՄԱՆՈՐԻՆԱԿ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄՐ ՎՍՏԱՏԵԼԻ Է ԹՎՈՒՄ ՆԱԽ ԻՐ ՎԱՏՄԱԿԱՆ ՀԱՎԱՍԻՐՈՒՅԱՄՐ:

Ունենալով նույն հիմքը և ելնելով արձանագրության բովանդակությունից ու պահպանված մտակա հատվածներից, Գ բարի առաջին տողը (արձանագրության 6-րդ տողի վերջավորությունը) հնարավոր ենք գտնում ՆԻ Ի ՀԱՆԻԵՐԶԵԱԼԷՂ բառով վերականգնել: Այն միանգամայն համապատասխանում է բովանդակությանը և իր տառերի քանակով լրիվ տեղադրվում բացակայող հատվածում:

Ինչ վերաբերում է նույն բարի հաջորդ երկու տողերին, ապա, ինչպես նշեցինք, այն վերականգնել էր քայլայանք: Երկրորդ տողում այդ թելադրում է ՆՈՍԱ[ՈՎԱՆԱԽՂՔ] բառի պահպանված սկիզբը, իսկ երրորդ տողում խոսվում է այն անձնավորության մասին, ում արձանագրության հեղինակը դեռևս 5-րդ և 6-րդ տողում ՀԱՅԻ և ԾՆՈՂ էր անվանում: Տարակույս լինել չի կարող, որ այս հատվածը պետք է կարդացվի ԾՆՈՂՆ ԻՄՈՅ ՍԱՐԳԻՍԷ:

Համեմատաբար ավելի բարդ է Գ բարի չորրորդ տողի վերականգնման խնդիրը, որի բացակայող հատվածը շատ ավելի մեծ է: Մեր կարծիքով այստեղ փորագրված պետք է լինեն եկեղեցու անունը, որն արդեն հայտնի է երրորդ տողից, ուստի ելնելով պահպանված հատվածի շարադրանքից, կորուսյալ մասը վերականգնում ենք ԱՌԻՐԲ ՈՒԽՏԱ ԳՐԻԳՈՐԻ ԻՂ ձևով:

Ի մի բերելով այս ամենը, առաջարկում ենք արձանագրության հետևյալ վերածանությունը.

1. ՅԱՄԱ ԱԾԱՊԱ[ՏԻԻ] ԵԻ ՀՈԳԵՒՈՐ ՏՆ ԽԱԶԿԱՆ ԵԻ Ի ԹԱԳԱԻ
2. ՈՐՈՒԹԵԱՆ ՍՄԲԱՏԱ ԲԱԳԲԱՏՈՒՆՈՅ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԿԱՆԴԵՑԱԻ
3. ՎԷՄԱ ԱՅՍ ԱՆՈՒԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ, ՉՈՐ ՀԻՄՆԱԳՐԵԱՑ ԱՅՐԵ ԱՅ ՀԱՅԻ
4. ՍԱՐԳԻՆ ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱՑ ԱՌԱՋՆՈՐԿ ԻՍԿ ԱՄԻ Ա ՓՈԽԻ ՅԱՇԽԱՐԶԵ ՆԱԽԲԱՆ ՉԱԽԱՐՏՈՒՄՆ
5. ԿՈՐԱ, ԻՍԿ ՅԵՏ ԵՂԻՑ ՆՈՐԱ ԵՍ ՎԱՅԻ ՍՈՂՈՄՈՆ, ՀԱՅԻ ՆՈՐԻՆ ՀԱՐԱՋԱՑ ԵԻ ԺԱՌԱՆԳ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԱՍ ԱԽԱՐՏԵՑԻՂ
6. ՇՆՈՐԶԻՒՆ ԱԾ ՉԿՆԻ Ե ԱՄԻ ՓՈԽՄԱՆ ԾՆՈՂԻ ԻՄՈՅ Ի ՅՄՉՉ ԱՄՄԻ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐԶԻ ԵՒ Ի ՀԱՆԻԵՐԶԵԱԼԷՂ
7. ԳԱՂՍԵԱՆՆ ՔԻ, ՈՉԿ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ, ՆԷԿ ԲՈՒԱԿԱՆԻՆ ՀԱՅՈՑ ՓԱՌՍ ՔԻ ԱՅ ԽՈՍՏՈՎԱՆԱԽՂՔ
8. ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԳՈՒԹԵԱՆՆ, ՈՐՔ ՄՏԱՆՆԲ ԸՆԿ ԳՐՈՒՆՍ ՍՈՐԱ ՅԻՇԵՍՑԵՆ Ի ՔՍ ՉԻՍ ԵԻ ՇՆՈՂՆ ԻՄՈՅ ՍԱՐԳԻՍԷ
9. ԵԻ ՉԱՇԽԱՏՈՂՍ ՍՈՐԱ ԵԻ ՏՐ ՔՍ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՈՂՈՐՄԵՑԻՆ, ԱԻՐԶԵՑԻՆՂ ՉՄՈՒՐԲ ՈՒԽՏԱ ԳՐԻԳՈՐԻ ԻՂ
10. ՉԵՌՆ ՍԱՄԵՀԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԵՏԻ ԱՐԵՂԱԻ ՅԻՇԶԵՍՉԻՔ ՉԻՍ
11. Ի ՅՆ ՍՈՐ ՉՍ ՏԻ ՈՐՈՒՄՆ ՎԱՐՔ ՅԱԻԿՏԵԱՆ, ԱՄՆՆ ՅԻՇԵՑԵՔ:

Արձանագրության միջին մասում (ինչպես այդ ցույց է տրված պատճենի վրա), կլոր շրջանակի մի փոքր հասված են արձանագրված է. եղել: Այստեղ փորագրված է եղել արևի ժամացույց:

Ինչպես ավանդում է արձանագրությունը, եկեղեցու շինությունը նախաձեռնել է Հոռոմոսի վանքի առաջնորդ Սարգիսը, որը հիմնադրումից մեկ տարի անց մահանում է, և եկեղեցու Լաուուցումը շարունակում ու ավարտում է նույն վանքի միաբան Սողոմոնը՝ հինգ տարի հետո: Այսպիսով, եկեղեցու շինությունը տևել է վեց տարի և ավարտվել ՆՆԴ (985) թվականին:

Արձանագրության ժամանակը նշված է երեք թվագրությամբ՝ արարչության՝ Ի ՅՄՁԶ (Ինն-ՂՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ (6286), հայկական մեծ տոմարով՝ ՆՆԴ և չափազանց հետաքրքիր «ՈԶԴ ԼՈՒՍԱԿՎՈՐՈՒԹԵԱՆՍ ԶԱՅՈՑ» թվականով: Այս տոմարը բացատրող միակ բառը «լուսավորության» է: Անշուշտ խոսքը այստեղ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելու տարեթվի մասին է, որը և վերածվել է տոմարական սխտեմի թվականի՝ 301—684 (ՈԶԴ)—985:

ՅՄՁԶ-ն արարչության թվականն է: Այդ մասին վկայում է նրան բնորոշող «լինելութեան աշխարհի» արտահայտությունը: Սակայն, սրբան էլ դա տարօրինակ է, այն չի համապատասխանում ո՛չ հին արձանագրություններում, անգամ մատենագրական երկերում գործածվող արարչության, ո՛չ Կայսերական (5508), ո՛չ Յոթանասնից (5198), ո՛չ Ալեքսանդրյան (5425), ո՛չ Շիրակացու (5281) և ո՛չ էլ հատ ու կենտ հանդիպող այլ թվականներին³: 6286 թ. 985 թ. ստացվում է, եթե արարչության տարեթիվը ընդունենք 5301-ը: Ինչպես հայտնի է, արարչության թվականների հաշվումները միշտ չէ, որ ճշտությամբ համապատասխանում են ներկայիս հաշվումներով որոշվող թվականներին: Սակայն այդ տարբերությունները սովորաբար մեկ տարուց ավելին չեն լինում, իսկ սվյալ դեպքում ամսնամ: Ետ հաշվումը Շիրակացու թվականն է և տալիս է շուրջ 20 տարվա տարբերություն՝ 6286—5281—1005 թ.: Այսպիսով, արարչության թվականների նույնիսկ ամենահավանական օրինակը որոշակի կասկածի և տարակուսանքի տեղիք է տալիս: Արձանագրության թվականի վերաբերյալ կասկածներ լինել չեն կարող: Նրանում գործածված էրկու մյուս թվագրումները ամենայն պարզությամբ վստահեցնում են, որ արձանագրությունը փորագրվել է 985 թ., ուստի մնում է ենթադրել, որ կամ գրիչը սխալ հաշվում է կատարել արարչության թվականը որոշելիս և ՅՄԿԶ-ի (6266) փոխարեն փորագրել է ՅՄՁԶ (6285) կամ գոյություն է ունեցել արարչության ևս մի թվական՝ 5301: Եթե ընդունենք, որ X դ. գործածություն է ունեցել արարչության 5301 թ., ապա սվյալ դեպքում հանձինս այս արձանագրության մենք պետք է ունենանք նրա եզակի օրինակը: Մեր կարծիքով ավելի հավանական է առաջին ենթադրությունը:

Արձանագրությունն ավանդում է նաև Հոռոմոսի վանահայր Սարգսի մասին: Այս հոգևոր պետը ըստ Ասողիկի⁴ եղել է Հոռոմոսի միաբանության առաջնորդը և պատկանել է երկրի հոգևոր շրջանների ազդեցիկ մարդկանց թվին: Ասողիկը տեղեկացնում է, որ նա մասնակցել է Անիում կայացած 969 թ. եկեղեցական ժողովին: Սարգիսը պատմիչի մոտ հիշատակված է մի շարք բարձր աստիճանավոր եկեղեցականների ցուցակում, որոնց թվումն էր նաև խաչիկ Աշարունյանցը՝ հետագա կաթողիկոսը: Արձանագրության սվյալների համաձայն Սարգիսը մահացել է 980 թ.:

Ինչ վերաբերում է Սողոմոնին, որն արձանագրության հեղինակն է, նրա մասին հիմնական տեղեկությունը բաղում ենք այս արձանագրությունից⁵: 5-րդ տողում նա իրեն անվանում է ԶԱՅՐ ՆՈՐԻՆ, Շարաղրանքից թվում է, որ «Նորին» դերանվան տակ պետք է հասկացվի հայր Սարգիսը, սակայն նման հետևությունը անհնարին է, որովհետև 6—7-րդ տողերում Սարգսին նա անվանում է իր ձեռք Առաջին հայացքից թվացող հակասությունը լուծվում է հետևյալ կերպ՝ «ԶԱՅՐ ՆՈՐԻՆ ԶԱՐԱԶԱՏ ԵՒ ԺԱՌԱՆԿ ՍՈՒՐԲ ՈՒՆՏԻՍ»՝ պետք է հասկանալ Հոռոմոսի վանքի հարազատ հոգևոր հայր, որին սուրբ ուխտի առաջնորդությունը ժառանգվել է Սարգսի կողմից:

Արձանագրության մեջ հիշատակված ամենահետաքրքիր դեմքը դա մարտարապետ Սամեհանն է: Նրա վերաբերյալ ևս այլ աղբյուրներ մեզ չեն հասել: Արձանագրությունը տեղեկացնում է, որ Սամեհանը եղել է արեղա Չի բացառվում նաև նրա՝ Հոռոմոսի վանքի միաբան լինելու հնարավորությունը: Հայկաձորի ս. Գրիգոր եկեղեցին անշուշտ նրա միակ ստեղծագործությունն է:

3 Այս թվականները շատ են հանդիպում միջնադարյան ձեռագիր հիշատակարաններում: Տե՛ս նաև «Շուվհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956, էջ 131—134:

4 Տե՛ս Ա ս ո ղ ի կ, Պատմություն տիեզերական, Պետերբուրգ, 1886, էջ 181:

5 Հոռոմոսի ս. Մինաս եկեղեցու 986 թ. արձանագրությունը, որի մեջ հիշատակվել է Սողոմոնի անունը, Հական լրացում չի անում:

չի եղել Այն, որ Աամենան արեղան հեղինակավոր է եղել որպես ստեղծագործող, վկայում է նրա «ճարտարապետ» մեծարումը: «Ամբողջ արձանագրական նյութի մեջ,— գրում է Ս. Բարխուդարյանը.— սա միակ դեպքն է, որտեղ գործ է ամփած ճարտարապետ բարձր: Բոլոր դեպքերում Աամենանի ճարտարապետական արվեստի ամենապերճախոս վկայությունը ինքր հուշարձանն է, որն աչքի է ընկնում կառուցողական բարձր արվեստով և նույր ճաշակով:

6 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և բարգրծ վարպետներ, Երևան, 1963, էջ 34: